«Հոս Պ. Տանաքեան, հոս ոչ Էջմիածնի Կաթողիկոս, ոչ ալ Պոլսոյ Պատրիարք կրնան խառնուիլ»։

Անճարացած Թիւրքիա Հայրը ստիպուած ինքն է լինում իւր զաւակի վերջին յուղարկաւորութեան կարգ կատարողը, ի զարմանս և ի գայթակղութիւն օտարների, որովհետև գերեզմանից վերադարձող Տէր Մատթէոսը՝ «Նէօալէթը խմն չի» ասելով, ամենայն սաստկութեամբ հեռանում է, Նա խեղճ Շաքէի մարմինը առանց կրօնական արարողութեան գերեզման է դրուում։

Մեզ համար շատ ծանր է արձանագրել այն տխուր փաստը, թէ որքան անտարբերութեամբ և նապոլէօնների սիրով միայն իւր հոգևոր հովուի և սփոփիչի գերն է կատարում կենտրոնից հեռու հոգևորականը, որ ամեն ինչ արդէն կորցրել է և՛ խղճի խայթ, և՛ ժողովրդի արտասուքի նշանակութիւնը և՛ ամենայն պատկառանք՝ թէ դէպի իւր հոգևոր իշխանութիւնը և թէ մանաւանդ դէպի եկեղեցու ընդհանուր Պետը։ Անշուշտ եզակի չեն այդպիսի անձնաւորութիւններ զանազան հեռաւոր կենտրոններում և նոյնիսկ մօտիկ վայրերում, որոնց վրայ դարձնելով ընդհանրապէս իրենց իշխանաւորների ուշադրութիւնը, որպէս զի արմատից կտրեն այդպիսի գայթակղութեան սերմերը՝ այժմ ի մասնաւորի այդ երկուսի վրայ ենք դարձնում Ազգ. Պատրիարքարանի լուրջ ուշադրութիւնը։

Կ. Պոլսի եկեղեցականներից մէկն առաջարկում է. ա) փիլոնազուրկ հռչակել քահանայական կոչում կրող այդ երկու անարժաններին և բ) Պատրիարքարան կանչելով բոլոր կառավարութեան միջոցով վերջնական պատիժ որոշել, համաձայն եկեղեցական օրէնքների։

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

### ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Կոնդակ Յանուն Ընդհանուր Հայուհեաց բարեգործ. ընկեր. Գաւրիէլու, որով օրհնին ջանք և ազգանուէր գործք ընկերութեանն. Թ. 47.

— Օրհնութեան և գոհունակութեան յանուն Աղանբէկի Խաչանեան Մարտիրոսեցւոյ վասն ջանից և ձեռներէցութեան նորա ի շինութեան Դպրոցին Մատրասայ գեղջ Շամախւոյ. Թ. 64.

— Յանուն Ս. Սինոդի՝ զկարգման նորոգ Անգամոց վանաց. կառավարութեան Ս. Աթոռոյ. Թ. 65.

— Յանուն Ս. Սինոդի՝ զկարգման Ընտան վարդապետի Վարդապարեան ի վանահայր Գանձասարի. Թ. 66.

— Յանուն Ս. Սինոդի՝ զկարգման Մուշէ վարդապետի ի վանահայր Ս. Խ. վանից Ն. Նախիջևանի. Թ. 68.

— Յանուն Սինոդի Թ. 107, որով պատուիրի առ յերդումն հաւատարմութեան զԳ. Վարդ. զԹովմա և զԿորիւն վարդապետս, որք ընկալեալ են ի հպատակութիւն Ռուսաց։

— Յանուն Վաղինակ քահանայի Փրոյեկուրնեցւոյ Թ. 114, որով շնորհին նմա իրաւունք կրելոյ զլանջախաչ քահանայական ըստ պէս և զծաղկեայ փիլոն։

— Օրհնութեան և քաջալերութեան յանուն հոգաբարձութեան Ազգ. հիւանդանոցին ս. Փրկչի Կ. Պոլսոյ. Թ. 118.

— Յանուն Սինոդի և Էջմիածնի, որ յայտնի կարգումն Գեր. Տ. Խորէն եպիսկոպոսի Ստեփանէ յԱռաջնորդ վիճակին Ատրպատականի. Թ. 134.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.


ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

1. ՃՇՄԱՐԻՏ ՔՐՈՍԸ . . . . . Կ. Վ. . .
2. Մեծեկան ամիս . . . . . Կ. Կ. . .
5. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ . . . . . . . .

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

4. Նոր գարուն . . . . . Ե. Յովհաննիսեան
5. Նիւթեր Աղուանից Պատ. ուսում. համար . Խ. Վ.
6. Մատենախօսութիւն . . . . . . Կ. Վ. .

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

7. Ռուսերէնի ուսումն . . . . . . Ս. Մ. .
8. Ժանտախտ . . . . . . . Կ. Տ. Խ. .
9. ՄԱՆՐԱԼՈՒՐՔ . . . . . . . . . .

ԱԶԳԱՅԻՆ

10. 1896 թ-ի Հայաստանեայց ս. եկեղեցւոյ համար
12. ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ . . . . .
ՄԱՅՐ ԱԹՈՌ . . . . . . . .
ՌՈՒՍԱՀԱՅՔ . . . . . . . .
ՏԱՃԿԱՀԱՅՔ . . . . . . . .

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.
ՅԱՒԵԼՈՒԱԾ. Անանիա Մոկացի, Գ. Տ. Մկրտչեան
ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.